

ՀԱՐՑԱԶԴՐՈՅՑ՝ ՏՈՔԹ. ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

Տոքթ. Ռուբինա Փիրումեան (ԵՈՒ. ՍԻ. ԷՂ. ԷՅ. համալսարանէն) անդամ է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործադիր խորհուրդին: Ան ծանօթ անուն մըն է հայկական շրջանակներուն մէջ իբրեւ Հայկական Յեղասպանութեան եւ Հայ Դատի հարցերու մասնագէտ: Անոր հիմնական գործերէն է «Լիթըրըրի Ռիսփոնսըս թու քաթասթրոֆի. տի Արմինիըն Էնտ ճիւղիչ էքսփիրիմենտ» (Գրական հակազդեցութիւններ աղէտի. հայկական եւ հրէական փորձառութիւնները) հատորը: Անոր բազմաթիւ գործերուն մէջ ճանաչատանքի արժանի է մանաւանդ «Հայ Դատի պատմութիւն» դասագիրքներուն շարքը. որ այժմ կ'օգտագործուի Միացեալ Նահանգներու, Գանատայի, Աւստրալիոյ եւ Հայաստանի շատ մը երկրորդական վարժարաններուն մէջ:

Ի՞նչ առիթով կը գտնուիք Լիբանան:

Լիբանան կը գտնուիմ մասնակցելու համար Կիլիկիոյ կաթողիկոսութեան 11 թեմերու կրթական մարմիններուն ներկայացուցիչներու խորհրդաժողովին՝ իբրեւ Արեւմտեան Ամերիկայի վարժարաններու խնամակալ մարմինի անդամ: Ինչ կը վերաբերի խորհրդաժողովին մասին տպաւորութիւններու, ես կը կարծեմ, որ խորհրդաժողովի օրակարգին վրայ դրուած բոլոր նիւթերուն քննարկումը ինքնին անհրաժեշտ քայլ մըն էր: Մեր գեկուցումներէն եւ յայտնած մտահոգութիւններէն ի յայտ եկաւ, որ իրապէս ունինք հասարակաց մտահոգութիւններ: Կրնայ ըլլալ, որ հարցերուն լուծումները գաղութ գաղութ տարբերին, սակայն բոլորիս նպատակը նոյնն է: Ինձի համար արժարժուած նիւթերուն կարեւորագոյնն էր հայեցի դաստիարակութեան հարցը, որովհետեւ մենք հետզհետէ տեղի կուտանք այդ մարզին մէջ: Այս մէկը մեծ մտահոգութիւն մըն է եւ անհրաժեշտ է, որ բոլորս աշխատինք հարցին լուծում մը գտնելու համար: Անհրաժեշտ է նաեւ, որ բոլոր թեմերը տեղեակ ըլլան իւրաքանչիւրի աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին:

Կրնա՞ք խօսիլ հայեցի դաստիարակութեան առաքելութեան մէջ ձեր ներդրումին մասին:

Ես իբրեւ անդամ Արեւմտեան Ամերիկայի վարժարաններու խնամակալութեան, որ կը վերահսկէ բոլոր դպրոցներու աշխատանքները,

իմ առաքելութիւնս կը նկատեմ առաւելագոյնս բարձրացնել հայեցի դաստիարակութեան մակարդակը եւ զարկ տալ աշակերտներուն մէջ հայկական ոգին: Այս մտահոգութենէն մեկնած՝ տարիներ առաջ Հայ Դատի Յանձնախումբին եւ Ազգային Վարչութեան համագործակցութեամբ, որոշուեցաւ մեր վարժարաններուն մէջ հայոց պատմութիւնը դասաւանդել միմեկեւ թ. դասարան, իսկ Ժ., ԺԱ. եւ ԺԲ. դասարաններուն դասաւանդել Հայ Դատը: Թէ ինչո՞ւ Հայ Դատ եւ ոչ հայոց պատմութիւն: Հայոց պատմութիւնը տարիներ շարունակ դասաւանդուած է հայ աշակերտին: Սակայն մեր կարծիքով, Հայ Դատը ուրիշ բան է: Հայ Դատը վերլուծական իմաստով խորացուած հայոց պատմութիւնն է: Հայ Դատը կը քննարկէ խնդրայարոյց հարցերը եւ չի հետեւիր դասական ժամանակագրական կարգի: Հայ Դատի համար որեւէ դէպք, որ տեղի ունեցած է անցեալին, այսօր գոյութիւն ունի իբրեւ փառաքան իրողութիւն՝ մեր ազգային փառաքան կեանքին մէջ: Հայ Դատը կը փորձէ պատմական երեւոյթներն ու դէպքերը մեր առօրեային մաս դարձնել: Այդ մտասեռնումով կազմուեցան Հայ Դատի դասագիրքերը՝ երեք հատորներով Ժ., ԺԱ. եւ ԺԲ. դասարաններուն համար: Այս տարի սակայն վերահրատարակուեցաւ Ժ. դասարանի դասագիրքը, որ թէ՛ սպառած էր եւ թէ ժամանակավրէպ դարձած, որովհետեւ մենք այսօր արդէն ունինք Ազատ եւ Անկախ Հայաստան եւ մեր մտասեռնումը տարբեր է: Այս տարուան վերահրատարակումով կարելի է ըսել, որ Հայ Դատի դասագիրքերուն շարքը ամբողջացած է:

Ի՞նչ մեթոտներ կը կիրարկուիք Հայ Դատի դասաւանդութեան համար:

Հայ Դատը առաջին հերթին ոգի է եւ այդ ոգին փոխանցելու համար պարզ ուսուցում կարելի չէ օգտագործել: Այդ մէկը արդիւնք չի տար: Այդ պատճառով մենք փորձեցինք կիրարկել դասաւանդումի սովորական լաւագոյն միջոցը: Այսպէս, դասագիրքը ունի իր վարժութեան տեսքակը եւ ուսուցիչին ուղեցոյցը, որ շատ կարեւոր է: Ինձի համար դասը փոխանցելը դասաւանդումին մէկ մասն է միայն, որովհետեւ աշակերտը պէտք է նաեւ առիթ ունենայ վերլուծելու: Թուականներ կամ անուններ սորվիլը այնքան ալ անհրաժեշտ չէ, որովհետեւ անոնք իսկապէս մոռացութեան կ'ենթարկուին, սակայն պէտք է սորվիլ երեւոյթներու մասին, դէպքերու եւ անոնց ազդեցութեան մասին՝ հայոց պատմութեան եւ մանաւանդ օրուան համաշխարհային հոլովոյթին մէջ: Այս մէկը Հայ Դատի դասաւանդութեան կարեւոր հիմքերէն մէկն է: Դասագիրքերու պարագային ես որդեգրած եմ նաեւ վարժութիւններու մեթոտը, որոնց

միջոցով աշակերտը առանց անդրադառնալու կրնայ շատ բան սորվիլ: Ես կը հաւատամ, որ Հայ Դատի ուսուցումը պէտք է ոչ միայն դասատուութեամբ եւ վարժութիւններու միջոցով կատարուի, այլ նաեւ՝ արտադասարանային աշխատանքներով: Հայ Դատը ինձի համար կենդանի աշխատանք է, որ պէտք է փոխանցուի աշակերտին: Աշակերտը պէտք է զգայ, որ ատիկա պարզ դասանիւթ չէ, որուն համար քննութիւն պիտի տայ եւ նիշ պիտի առնէ, այլ՝ կենդանի աշխատանք, որուն իր մասնակցութիւնը պիտի բերէ:


Հայ Դատի ձեր պատրաստած դասագիրքերը կը դասաւանդուին Միացեալ Նահանգներու, Գանատայի, Աւստրալիոյ եւ Հայաստանի մէջ: Սփիւտեան այլ վարժարաններու մէջ զանոնք տարածելու ծրագիրներ ունի՞ք:

Նախապէս խորհրդաժողովին ընթացին ես ըսի, որ մեր գաղութները իրարմէ շատ տեղեակ չեն: Ես շատ յոյս ունիմ, որ նման խորհրդաժողովներու միջոցով Հայ Դատի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը զգալով կը յաջողուին այս դասագիրքերը գործածել մեր դպրոցներուն մէջ:

Հայ Դատի դասագիրքերու երեք հատորները պատրաստուած են արեւմտահայերէնով եւ նախատեսուած՝ Սփիւտի վարժարաններուն համար: Ինչ կը վերաբերի Հայաստանին, ապա այս եռահատոր գիրքը չ'օգտագործուիր: Քանի՞ մը տարի առաջ աշխատանք տարուեցաւ, որ այս երեք դասագիրքերուն վրայ հիմնուած Հայ Դատի դասաւանդութեան ծրագիր կազմուի Հայաստանի վարժարաններուն համար: Օգտագործուած մեթոտն ու հիմքերը նոյնն են, սակայն Հայաստանի Հայ Դատի դասագիրքը աւելի խտացուած է (երեք հատորի փոխարէն մէկ դասագիրք): Այդ դասագիրքը մաս կը կազմէ Հայաստանի կրթական ծրագիրին եւ յոյս ունիմ, որ իր արդիւնքը կու տայ:

Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ ի՞նչ ուսումնասիրութիւններ կատարած էք:

Հայկական Ցեղասպանութեան մարզին մէջ իմ մասնագիտութիւնս կրնամ օգտագործել միայն ակադեմական միջոցներով: Այս իմաստով, իմ աւարտագրած եղած է Հայկական Ցեղասպանութեան եւ Հրէական Ողջակիզումի բաղդատականը: Ցեղասպանութեան գրականութիւնը տարիներ կարդալով զգացած եմ, որ գեղարուեստական գրականութեան մէջ շատ ուժակաւորութիւն կայ, որ պէտք է օգտագործուի Ցեղասպանութիւնը աւելի դիւրամատչելի ձեւով ծանօթացնելու համար: Գեղարուեստական գրականութիւնը ընթերցողներուն համար երեւակայական դաշտ կը բանայ, իրականութիւն-



ներ կը մատուցէ, ընթերցողին հաղորդականութիւն կը ստեղծէ նիւթը աւելի ըմբռնելի կը դարձնէ պէտք է օգտուինք այս մէկ

Ես իմ աւարտագրած գրքի աւելի ուշ գայն ընդլայնելով իր տարակեցի «Լիթըրըրի Ռիսփոնսըս թու քաթասթրոֆի. տի Արմինիըն Էնտ տը ճիւղիչ էքսփիրիմենտ» խորագիրով գիրքը: Այս մի նախաքայլ մըն էր պարզելու գրականութեան ազդեցութիւնը: Պատմական ազդեցութիւն կ'արտացոլայ գրականութեան սակայն գիրքին մէջ միեւնոյն ժամանակ կ'ուսուցանաս ինքն գրականութեան ազդեցութիւնը:

Այս գիրքին մէջ ներառուած մինչեւ 1930ական թուականէ Հայկական Ցեղասպանութեան լրիւ հակազդեցութիւն ստեղծու գրականութեան ուսումնասիրութիւնը: Գիրքին հրատարակուելէն ետք իմ աշխատանքս ընդլայնելով եւ ուսումնասիրելով երկու եւ երրորդ սերունդներու հակազդեցութիւնը, հասայ այն եզրակացութեան, որ Ցեղասպանութիւնը չ'լուծուած բնուի, իբրեւ գերանական բարդոյթ, իբրեւ պահանջատիրական, փառաքանական իրողութիւն, փառաքանական իրողութիւն: Սակայն մակարդակներ կարելի է մեր երիտասարդութեան մէջ: Ան կ'արտայայտուի թէ՛ իր փառաքանական գործունէութեան թէ՛ գրական գործունէութեան: Կրնամ ըսել, որ մանաւանդ Միւսայ Նահանգներու մէջ բաւական հետաքրքրութիւն կը յառաջացնէ յուշերու արտագրումը: Պատմականութենէն ետք երրորդ սերունդի հայ երիտասարդը, որ տիրապետէ անգլերէն լեզուին, մեծ հօր կամ մեծ մօր յուշեր հիման վրայ կը փորձէ վերադառնալ կամ արտագրել այդ յուշերը: արտագրութիւնները մեծ ազդեցութիւն ունին Հայկական Ցեղասպանութեան նմանաչման վրայ: Այս մի գին մէջ գործունէութիւնս ուսումնասիրելու այդ գրականութեան տարածումին օգտակար դառնէ: Գիտաժողովներու մասնակցելով, դասախօսութիւններով եւ դասախօսութիւններն ու ուսումնասիրութիւնները հրատարակելով կը փորձեմ գրական գործ գիտականօրէն հրամցնել:

Հրատարակչական նոր ծրագիրներ ունի՞ք:

Մոիթը ունեցած եմ մասնակցելու «ԵՈՒ. ՍԻ. ԷՂ. ԷՅ.» համալսարանին կազմակերպած Արեւմտա-

Ճարտնակութիւնը՝ քովի

Ակիւրը տեսնել Չրդ էջ

յաստանի նահանգներուն նուիր-
ուած քանի մը գիտածողովներու,
որոնց ընթացքին ներկայացուցած
եմ տարբեր գեկուցումներ: Մաս-
նակցած եմ Վանի նուիրուած գի-
տածողովին, որուն ընթացքին ներ-
կայացուցի Վանի բարբառին ազ-
դեցութիւնը արեւմտահայերէնի
վրայ եւ անոր ընդմէջէն՝ Խրիմեան
Հայրիկի ներդրումը: Այդ աշխա-
տասիրութիւնը արդէն լոյս տեսած
է: Մասնակցած եմ նաեւ Էրզրումի
գիտածողովին՝ ներկայացնելով
Էրզրումի բնակչութեան քաղաքա-
կան մտքի զարգացումը՝ իր տար-
բեր փուլերով: Այս աշխատասի-
րութիւնը հրատարակութեան ըն-
թացքի մէջ է: Հրատարակութեան

ընթացքի մէջ է նաեւ Հայկական
Ցեղասպանութեան նուիրուած գի-
տածողովին ներկայացուցած
նիւթս, որ կը վերաբերէր Ցեղաս-
պանութեան գրականութեան, ա-
նոր ընդգրկած հիմնական թեմա-
ներուն: Կարսի գիտածողովին ներ-
կայացուցած էի Կարսի կարեւո-
րութիւնը, որ խորքին մէջ մեր յե-
ղափոխական պատմութեան վերա-
բերող նիւթ մըն է: Ընդհանուր առ-
մամբ իմ աշխատանքս կ'ընթանայ
երկու ուղղութեամբ՝ Ցեղասպա-
նութեան գրականութիւն եւ յե-
ղափոխական շարժում ու ազա-
տագրական պայքար, որ մինչեւ այ-
սօր իր ազդեցութիւնը ունի մեր
քաղաքական մտքի զարգացման
վրայ:

«Ազդակ»

This interview was published in
our daily newspaper "The Way Op" - so
I thought I might send it to you
just in the event that the "The Way"
has not reached you yet.
Germaine